Ալեքսանդր Շիրվանզադե

Գրիչ կրծողներ և թատերականներ

Ահա վերին աստիճանի հետաքրքրական տիպարներ: Արժանի վիպասանի գրչին և նկարչի վրձինին:

Շատ ժամանակ չէ, երևան են եկել այդ տիպարները մեր կյանքում այն օրվանից, երբ գրականությամբ պարապելը և թատրոնին ծառայելը մի բուռը հայ խենթերի շրջանում պատվավոր բաներ են համարվել: Բայց արդեն ձուլվել են, կազմակերպվել և այժմ ներկայացնում են գրեթե գեղարվեստական ամբողջություն:

Գրիչ կրծողներ և թատերակերներ: Ո՞վ չի ճանաչում այդ մարդկանց: Նրանց կարելի է հանդիպել ոչ միայն Թիֆլիսում, որ նրանց սկզբնական օրրանն է, այլև շատ գավառական քաղաքներում: Միայն Բաքվում նրանց թիվը հասնում է մի քանի տասնյակների:

Դա մի ամբողջ դասակարգ է իր բնորոշ գծերով, իր սեփական հարազատ գործերով: Մի դասակարգ՝ բաղկացած երկու մասերից, որոնցից մեկը կպել է հայ գրականության նիհարիկ մարմնին, մյուսը՝ հայ թատրոնի չոր ոսկորներին: Երկուսն էլ կրծում են ամենայն համառությամբ:

Գրականությունն ու թատրոնը ամեն վայրկյան թափահարում են իրենց տանջվող մարմինները, ճիգ են անում ազատվելու նրանցից: Բայց հնար չկա, կրծողները շատ ամուր են կոխել իրանց ատամները հարստահարվող մարմնի մեջ. ազատվել նրանցից անկարելի է:

Ես բավական ուսումնասիրել եմ այդ դասակարգը: Ընդհանուր առմամբ դա համակրելի է: Համակրելի իր ձգտումներով և միտումներով: Եվ ինչ ավելի գովելի ձգտում կարող է լինել, քան կամենալ անձնատուր լինել մտավոր և ազնիվ մի աշխատանքի օգնել հայ գրականությանը կամ երջանկացնել ապաբախտ հայ բեմը մի նոր ուժով:

Ահա ձեզ մի եռանդով լի բարեսիրտ երիտասարդ: Նա նոր է ավարտել այս կամ այն միջնակարգ դպրոցը կամ չի ավարտել, այս կամ այն պատճառով թողել է կիսատ: Նա միջոց չունի բարձրագույն դպրոց անցնելու և չի ուզում դառնալ գործակատար, հաշվապահ, խանութպան, դասատու, արհեստավոր: Նա արհամարհում է այս բոլոր արհեստները: Մինչդեռ ունի աշխատելու փափագ: Կյանքը թրթռում է նրա ամեն մի շարժման մեջ, նրա վառվռուն աչքերը պսպղում են աշխատելու բուռն փափագից: Սակայն արհեստավորի գործիքը կոպիտ է նրա նրբացած մատների համար, գործակատարի պաշտոնը վիրավորական, խանութը ձանձրալի: Նրա պատանեկական կրծքի տակ բուն է դրել մի վարակիչ ախտ, բոլոր ախտերից զորավորը և սոսկալին փառք վաստակելու ախտը: Նրան գրավում է կամ գրականական զբաղումը կամ թատրոնի մթնոլորտը:

«Այս ինչը վայելում է հասարակության լուռ հարգանքը իբրև հեղինակ, այն ինչը ամեն օր արժանանում է ամբոխի ծափահարություններին իբրև դերասան, ինչո՞ւ ես էլ չփորձեմ իմ ուժերը», մտածում է սոսկալի ախտով վարակվածը: Եվ ահա տեսնում ես նրան կամ խմբագրատների շուրջը պտտելիս, կամ կուլիսների հետևում բեմի եզրերը հոտոտելիս:

Ես նրան հաճախ հանդիպում եմ Գալավինսկիյ պրոսպեկտի վրա: Կոնատակին գրքեր, գրպանները լի լրագրերով, երեսը գրեթե անլվա, մազերը կեղտոտ, վերարկուի օձիքը վեր և գլխարկի եզրերը վար քաշած, եղունգները կեղտոտ, փողկապը յուղոտ, կոշիկների կրունկները ծոծռված: Սկզբում նրա դեմքը պայծառ է, քայլվածքը համարձակ: Բայց այդ միայն առաջին շրջանն է փորձի: Հետզհետե կյանքը բաց է անում նրա առջև իր դաժան դեմքը և պարզում է իր անողոք օրենքները: Տեսնում ես մտախոհությունը դրոշմեց պայծառ ճակատի վրա և վառվռուն աչքերի տակ խորշեր, և տակավին պատանեկական դեմքը

կամաց-կամաց մթագնեց:

Փորձն արդեն ցույց է տվել պատանուն իր դառնությունները: Առաջ է եկել մտատանջություն և ապագայի մասին խորհելու ընդունակություն: Գրականական ասպարեզը մեկի, բեմը մյուսի համար դարձել է խորթ մայր: Բայց ինչ արած, ախտն արդեն շատ խոր է ամրացել նրա հոգու մեջ, շատ է թունավորել նրա արյունը: Ազատվելու հնար կար, բայց անհրաժեշտ են կամքի ուժ և մտքի զորություն: Եվ նա, որ ունի այս բնական գանձը, կարողանում է ազատվել մոլորությունից և գտնել կյանքի ընդարձակ ասպարեզում ավելի համապատասխան ուղի: Նա դառնում է ուսուցիչ, գործակատար, արհեստավոր, մի խոսքով, հասարակության ոչ ավելորդ անդամ:

Թշվառ և ողբալի է նրանց վիճակը, որոնք չունեն իրանց ախտից բուժվելու զորություն: Քսանուհինգ տարվա ընթացքում իմ աչքի առջև ասպարեզ են եկել և անբախտացել ու անբախտացրել իրանց մերձավորներին գուցե հարյուրավոր այդպիսի «անաջողակներ» թե՛ գրականության մեջ և թե՛ բեմի վրա:

Այժմ գրեթե օր չի անցնում, որ ինձ իբրև գրականության հետ առնչություն ունեցողի՝ չդիմի մեկը կամ մյուսն այդ վարակվածներից՝ մի ձեռագիր ձեռքին:

Պարոն այսինչ, խնդրում եմ կարդաք այս իմ գրականական փորձը և ձեր կարծիքը հայտնեք:

Բախտիս նայեցեք, որ տարիների ընթացքում իմ դատաստանին ենթարկված ձեռագրների մեջ չեմ հանդիպել գեթ մեկին, որ իրավունք տար ինձ նրա հեղինակին անկեղծ խրախուսելու:

Ճշմարիտ է, հետո ինձ ներկայացված ձեռագրներից շատ շատերը ես տեսել եմ մեր ամսագրների կամ լրագրների մեջ տպագրված: Բայց դրանով նրանց արժանավորությունը մազի չափ չի ավելացել իմ աչքում: Ես մի ավելորդ անգամ համոզվել եմ, որ բաժանորդների քչությունն է մեր հանդեսներին ստիպում տեղ տալ իրանց էջերում ամեն մի անշնորհք գրվածքի լոկ այն պատճառով, որ դրվածքը չի վարձատրվում:

Պատահել է, որ հեղինակ լինելու տենչով այրվողին չեմ կարողացել կարծիքս անկեղծ հայտնել: Ինչ մեղքս թաքցնեմ, քաջություն չեմ ունեցել նրան հիասթափեցնելու և կարծիքս ամփոփել եմ անորոշ դարձվածների մեջ. «Վատ չէ, կարող էիք գրել, աշխատեցեք զարգացրեք ձեր միտքը, ուսումնասիրեցեք կյանքը, սովորեցեք հայերենս և այլն: Ուրիշ, ավելի խիստ կարծիք հայտնել ես թուլամորթաբար չեմ կարողացել, չկամենալով զրկել մարդկանց այն հավատից, որ ունին դեպի իրանց չունեցած ձիրքը:

Ավելի թշվառ են իմ աչքերում բեմի սիրահարները: Դրանք արդեն կործանվում են ավելի դյուրին և արագ: Եվ դրանց թիվն ավելի է, որովհետև բեմի հրապույրն ավելի զորավոր է թեթևամիտների համար: Քանի-քանի մարդիկ կան այսօր թե՛ Թիֆլիսում և թե՛ գավառներում, որոնք անխնա աղավաղում են իրանց կյանքը բեմի տախտակամածի վրա: Մարդիկ, որոնք ուրիշ հանգամանքներում կարող էին օգտակար քաղաքացիներ լինել: Բայց համարձակվեցեք նկատել նրանց, թե բեմի համար չեն ստեղծված, և դուք ուղղակի վիրավորական պատասխան կստանք: Օ՜օ անհնարին է դիպչել այդ մոլորվածների հիվանդոտ ինքնասիրությանը: Նրանք չգիտեն և չեն զգում, որ ուրիշների մեջ կարեկցության զգացում են շարժում, որ ուղղակի խղճալի են իրանց մտավոր ապիկարությամբ:

Ես չեմ ուզում մեղադրել այդ մարդկանց: Չեմ էլ կարող ասել, որ այդ մոլորվածները միայն մեր վայրիվերո կրթվող հասարակության ծնունդներ են: Բոլոր երկրներում և բոլոր ազգերի մեջ կան նույն տիպարները: Պետք է ցավել միայն, որ մեր սահմանափակ հասարակական կյանքն էլ է ասպարեզ դուրս ձգում այդպիսի տիպարներ: